

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ԼՈՒԿԱՇԻՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԿԻՍԱՍՅԱԿԱՅԻՆ /2013 թվականի հունվար - հուլիս/

Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

2013թ -ի հունվար - հուլիս ամիսների ընթացքում գյուղապետարան է դիմել համայնքի թվով 50 բնակիչ, որից 15-ը գրավոր, դիմումատուների հարցերին տրվել է լիարժեք պատասխան: Ընտանեկան նպաստի համակարգում կատարվել է 36 ընտանիքների ընդգրկման փաստագրման աշխատանքներ, ստացվել է 55, առաքվել է թվով 46 շրջաբերական: Գյուղապետարանը նոտարական գրասենյակում, Ք.Կ.Ա.Գ.-ի բաժնում, անձնագրային բաժնում, կադաստրի տարածքային ստորաբաժնում 31 անգամ միջնորդությամբ հանդես է եկել համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով:

Կայացել է համայնքի ավագանու 3 նիստ, որոնք ներկայացվել են մարզպետարան: Գյուղապետի կողմից կայացվել է տարբեր բնույթի 6 որոշումներ և 8 կարգադրություններ, որոնք նույնպես ներկայացվել են մարզպետարան:

Ֆինանսների բնագավառում

Օրենքով սահմանված կարգով ապահովել և տնօրինել է համայնքի բյուջեի մուտքերը և նպատակային օգտագործումը: Հաշվետու ժամանակահատվածում հավաքագրվել է և մուտքագրվել է գույքահարկի մասով 680 000 դրամ /վեց հարյուր

ութսուն հազար/, հողի հարկի մասով 965 000 դրամ/ ինը հարյուր վաթսուներեք հազար/:
Հաշվետու ժամանակաշրջանում գյուղապետարանի և ենթակա հիմնարկների
աշխատավարձերի և եկամտային հարկերի պարտքը կազմում է 2 000 000 / երկու միլիոն
/դրամ:

Պաշտպանության բնագավառում

Գյուղապետարանը տարածքային զինկոմիսարիատից աշնանային զինակոչի
համար ստացած ծանուցագրերը ժամանակին հասցնում է հասցեատերերին և հետևում է,
որ ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ: Ձին ծառայությունից խուսափողների
թիվը հասցվել է գրոյի, ինչպես նաև աշխատանքներ է տարվում նախկինում
զինծառայությունից խուսափողների հայտնաբերման և զինկոմիսարիատ ներկայացնելու
գործում:

Աջակցվում է և ուշադրության կենտրոնում են պահվում պատերազմի
վետերանների սոցիալական խնդիրների լուծումը: Աշխատանքներ են տարվում
երիտասարդության շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Անմիջական վերահսկողություն է սահմանվում համայնքի հողօգտագործողների
նկատմամբ տարածքները նպատակային օգտագործման ուղղությամբ : Համայնքի
բնակիչներին հատկացվել է շուկայական գներից զգալի ցածր գներով 127 000 կգ
ագոտային պարարատանկույթ և դիզ վառելիք 40 440 լիտր: Մասնագետների
մասնակցությամբ տրվել է անվճար խորհրդատվություն բույսերի պաշտպանության
հարցում:

Կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում

Համայնքում կատարվում է շաբաթական աղբահանում, որի համար կնքվել է
աշխատանքային պայմանագիր մեխանիզատորի հետ: Կնքվել է պայմանագիր սանէիպիդ
կայանի հետ խմելաջրի որակի աղտորոշման նպատակով: Խիստ հսկողություն է
սահմանվել գյուղապետի կողմից խմելաջրի խողովակաշարի վրա կատարված վթարների
և նրանց վերացնելու ուղղությամբ, որի վերաբերյալ կայացվել է գյուղապետի
համապատասխան որոշումներ:

Տրանսպորտի բնագավառում

Գյուղապետարանի կողմից կատարվել է մասնակի ավագապատման և հարթեցման աշխատանքներ:

Առևտրի և սպասարկման բնագավառում

Արգելվել է փողոցային առևտուրը:
Հսկողություն է սահմանվել արագ փչացող սննդի և առևտրային կանոնների խախտման նկատմամբ, ինչի մասին պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվում մարզպետարան:

Բացառվել է փողոցային վառելանյութի վաճառքը:

Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և սոցիալական ծառայության բնագավառում

Բուժ. անձնակազմի և գյուղապետարանի մասնակցությամբ հսկողություն է սահմանվել խմելաջրի վթարների, խորքային հորերի քլորացման և կենցաղային աղբի հեռացման հարցում: Համաճարակների կանխարգելման նպատակով կատարվում է ամենօրյա բակայցեր և տարվում է բացատրական աշխատանքներ: Համայնքում հրավիրվում են բժիշկ մասնագետներ ազգաբնակչությանը ստուգելու, համապարատասխան անվճար բուժումներ և խորհուրդներ տալու նպատակով:

Գյուղատնտեսության բնագավառում

Համայնքում համաձայն գրաֆիկի կազմակերպվում է անասունների և թռչունների հակահամաճարակային պատվաստումներ: